

## ՀԱՐՑԱՇԱԲ

1. Եթե կազմակերպությունը ստանում է շահութահարկի իմաստով հարկվող եկամուտներ և նվազեցվող եկամուտներ, որնք հստակ տարանջատելի չեն, արդյոք կա անհրաժեշտություն վարչական ծախսերի նվազեցման մասով կիրառել տեսակարար կշիռ.  
Ա. Այո  
Բ. Ոչ
2. ՀՀ ռեզիդենտ ընկերությունն զբաղվում է ապրանքների մատակարարման միջնորդական գործունեությամբ և իր գործնկերների հետ կնքել է ապրանքների մատակարարման հանձնարարության պայմանագիր, կարող է արդյոք միջնորդ ընկերությունը համարվել շրջանառության հարկ վճարող.  
Ա. Այո  
Բ. Ոչ
3. ԱԱՀ վճարող ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը հանդիսանում է ծխախոտի արտադրող և վերավաճառող: ԱԱՀ-ի հաշվանցվող գումարների մասով, արդյոք պետք է վարի առանձնացված հաշվառում.  
Ա. Այո  
Բ. Ոչ
4. Երբ այլ արտադրանքի արտադրության մեջ օգտագործվող նյութերի ինքնարժեքը բարձր է դրանց իրացման գուտ արժեքից  
ա. նյութերի ինքնարժեքը իջեցվում է մինչև իրացման գուտ արժեք վաճառքի համար պահվող ապրանքներին համանման ձևով, եթե կազմակերպությունն ընտրել է այդ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը  
բ. նյութերի ինքնարժեքը իջեցվում է մինչև իրացման գուտ արժեք միայն այն դեպքում, երբ ակնկալվում է, որ դրա միջոցով արտադրվելիք պատրաստի արտադրանքի ինքնարժեքը գերազանցելու է իրացման գուտ արժեքին  
գ. նյութերի ինքնարժեքը ընդհանրապես չի իջեցվում մինչև դրանց իրացման գուտ արժեք  
դ. նշված բոլոր պատասխաններն էլ սխալ են:
5. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը իրենից ներկայացնում է  
ա. կազմակերպության կողմից հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվություններ կազմելու և ներկայացնելու նպատակով ընդունված որոշակի սկզբունքներ, հիմունքներ, եղանակներ, կանոններ, ձևեր և արարողակարգեր  
բ. պետության կողմից հաշվապահական հաշվառման ոլորտում դրված նպատակների և դրանց հասնելու համար իրականացվող ծրագրերի և միջոցառումների ամբողջությունը  
գ. կազմակերպության կողմից այն հարցերի հաշվապահական հաշվառման համար ընդունված սկզբունքներն են, հիմունքները, եղանակները, կանոնները, ձևերը և արարողակարգերը, որոնց համար հաշվապահական հաշվառման ստանդարտներով սահմանված մոտեցումները կիրառելի չեն

դ. նշված բոլոր պատասխաններն էլ սխալ են:

6. Պարտավորության հարկային բազան՝

ա. այն գումարն է, որը հարկային նպատակով ավելացվելու է պարտավորության հաշվեկշռային արժեքը փոխհատուցելիս ստացվելիք տնտեսական օգուտներից

բ. այն գումարն է, որը հարկային նպատակով նվազեցվելու է պարտավորության հաշվեկշռային արժեքը փոխհատուցելիս ստացվելիք տնտեսական օգուտներից

գ. դրա հաշվեկշռային արժեքն է՝ հանած ցանկացած գումար, որը, կապված այդ պարտավորության հետ, հետագա ժամանակաշրջաններում հարկային նպատակներով նվազեցվելու է

դ) դրա հաշվեկշռային արժեքն է՝ գումարած ցանկացած գումար, որը, կապված այդ պարտավորության հետ, հետագա ժամանակաշրջաններում հարկային նպատակներով նվազեցվելու է:

7. Ակտիվներին վերաբերող շնորհները այնպիսի պետական շնորհներ են, որոնց հիմնական պայմանն այն է, որ շնորհ ստացող կազմակերպությունը պետք է՝

ա. գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի երկարաժամկետ ակտիվներ

բ. գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի ակտիվներ

գ. գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի կարճաժամկետ ակտիվներ

դ. վաճառի կամ այլ կերպ օտարի երկարաժամկետ ակտիվներ:

8. Ոչ ընթացիկ պահուստների զեղչման ազդեցության ճշգրտման հետևանքով առաջացած տոկոսային ծախսերի արտացոլում.

Ա. Դեբետ 729

Կրեդիտ 425

Բ. Դեբետ 414

Կրեդիտ 425

Գ. Դեբետ 727

Կրեդիտ 414

4.22. Հիմնական միջոցների ապատեղակայման ծախսումների համար ստեղծված ոչ ընթացիկ պահուստի ճանաչում.

ա. Դեբետ 821

Կրեդիտ 425

Բ. Դեբետ 721

Կրեդիտ 425

Գ. Դեբետ 714

Կրեդիտ 425

4.23. Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հարկվող ժամանակավոր տարբերությունների աճիզծով հետաձգված հարկի գումարների արտացոլում.

Ա. Դեբետ 751

Կրեդիտ 151

Բ. Դեբետ 751

Կրեդիտ 422

Գ. Դեբետ 751

Կրեդիտ 542

/1-3 հարցերի պատասխանները կգնահատվեն մեկնաբանության առկայության դեպքում/

#### ԽՆԴԴԻ ՊԱՏԱՍԽԱՆ

1.  $(1200,0+500,0)*0,2 = 340,0$  կտ
2.  $6000,0*0,2 = 1200,0$  կտ
3.  $25000,0*0,2 = 5000,0$  կտ
4.  $(30000,0-30000,0-20%)*0,2 = 4800,0$  դտ

Վճարման ենթակա ԱԱՀ 1740,0